**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 23.04.2020թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝**
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
**Գնահատողներ՝**
- ՀՀ ԶՈՒ ԹԿ իրային ծառայության պետ, գնդապետ Ա. Թուխյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
- ՀՀ ԶՈՒ ԹԿ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, մայոր Վ. Բարսեղյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման երկրորդ բաժնի ավագ մասնագետ Ա. Հովհաննիսյան:

***« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ա. Հովհաննիսյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

**1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «**վրան, կոշիկ, գլխարկ, բաճկոն, շապիկ**»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1. | «ԳԴԱԿ» ՍՊԸ |
| 2. | «ՌԱԼՖ» ԳՐՈՒՊ ՍՊԸ |
| 3. | «Տեքսուռլդ» ՍՊԸ |
| 4. | «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ |
| 5. | «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

**2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ
- «ՌԱԼՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ի, որի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 11-րդ չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրերը թերի են լրացված և չեն համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված 11-րդ

չափաբաժնով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին, մասնավորապես՝ բացակայում է հրավերով նախատեսված էսքիզը, կամ մասնակցի կողմից մատակարարվելիք ապրանքի էսքիզի՝ հրավերով նախատեսված էսքիզին համապատասխան լինելու դրույթը:

- «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի, որի կողմից

1. Հավելված 1.1-ով ներկայացված 1-ին չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում նշված է **«<<Օկսֆորդ 600>>, 2000մմ PU-պատվածքով>> կամ համարժեք տեսակի պաշտպանական գույնի գործվածքից»** տեղեկատվությունը, որը անհրաժեշտ է հստակեցնել՝ **բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը**:

2. Հավելված 1.1-ով ներկայացված 1-ին չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրերը թերի են լրացված և չեն համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին, մասնավորապես՝ «- **պայուսակ - 3 հատ» տեղեկատվությունից հետո նշված չէ**

**«-վրանի տեղադրելու կարգ: Փաթեթավորումը 3 հատ պայուսակներով: Վրանների արտադրության տարեթիվը՝ 2020թ.-ից ոչ պակաս, շահագործման երաշխիքային ժամկետը 365 օր: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները՝ 2%: Գործվածքի վերաբերյալ մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի համապատասխանության սերտիֆիկատ:» տեղեկատվությունը:**

3. ներկայացված փաստաթղթերում՝ հայտի ապահովումը ներկայացված է տուժանքի տեսքով (հավելված 4.1), սակայն ԳՀԱՊՁԲ-20-7/32 ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.5 կետի համաձայն հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3) Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» **կարգի 41-րդ կետը՝ 30.04.2020թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4 **05.05.2020թ.**-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, արձանագրելով, որ սույն արձանագրության 2.3 կետում նշված՝ շտկման ենթակա անհամապատասխանությունը մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են, որոշեց մասնակիցների հայտերը գնահատել բավարար (համապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

| Չ/հ | Գնման առարկա | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը (դրամով) | Նախահաշվ. գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | Գնային առաջարկ ՀՀ դրամ | | | | | Ընտրված մասնակցի անվանումը /բանակցություն/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Հ/հ | Անվանումները | Ինքնարժեք | Շահույթ | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր գին | |
| 1 | զինվորական վրաններ/ Վրան՝ 5 Մ-1 /3,4x4մ/ չափսի | լ-կ | 100 | 277,872.00 | 27,787,200.0 | 1 | «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ» | 20,178,000.0 | 2,242,000.0 | 22,420,000.00 | 4,484,000.00 | 26,904,000.00 | Բանակցություն 1 մասնակից |
| 2 | գլխարկներ/Գլխարկ գրասենյակային | հատ | 2,000 | 8,500.0 | 17,000,000.0 | 1 | « ԳԴԱԿ » ՍՊԸ | 11,900,000.0 | 2,100,000.0 | 14,000,000.00 | 2,800,000.00 | 16,800,000.00 | Բանակցություն 1 մասնակից |
| 3 | բաճկոն/Բաճկոն ձմեռային | հատ | 2,020 | 23,500.0 | 47,470,000.0 | 1 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» | 21,430,364.0 | 2,143,036.0 | 23,573,400.00 | 4,714,680.00 | 28,288,080.00 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» |
| | | | | | | 2 | «Տեքստուրըր» ՍՊԸ | 21,977,600.0 | 3,878,400.0 | 25,856,000.00 | 5,171,200.00 | 31,027,200.00 | |
| 4 | բաճկոն և տաբատ | լ-կ | 3,200 | 20,200.0 | 64,640,000.0 | 1 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» | 33,454,545.0 | 3,345,455.0 | 36,800,000.00 | 7,360,000.00 | 44,160,000.00 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» |
| | | | | | | 2 | «Տեքստուրըր» ՍՊԸ | 34,489,600.0 | 6,086,400.0 | 40,576,000.00 | 8,115,200.00 | 48,691,200.00 | |
| 5 | բաճկոն և տաբատ/Բաճկոն և տաբատ /կարճաթև/ | լ-կ | 3,200 | 19,700.0 | 63,040,000.0 | 1 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» | 31,767,273.0 | 3,176,727.0 | 34,944,000.00 | 6,988,800.00 | 41,932,800.00 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» |
| | | | | | | 2 | «Տեքստուրըր» ՍՊԸ | 33,673,600.0 | 5,942,400.0 | 39,616,000.00 | 7,923,200.00 | 47,539,200.00 | |
| 6 | Բաճկոն և կիսաշրջազգեստ | լ-կ | 800 | 19,200.0 | 15,360,000.0 | 1 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» | 7,760,000.0 | 776,000.0 | 8,536,000.00 | 1,707,200.00 | 10,243,200.00 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» |
| | | | | | | 2 | «Տեքստուրըր» ՍՊԸ | 8,200,800.0 | 1,447,200.0 | 9,648,000.00 | 1,929,600.00 | 11,577,600.00 | |
| 7 | բաճկոն և կիսաշրջազգեստ/ /կարճաթև/ | լ-կ | 800 | 18,700.0 | 14,960,000.0 | 1 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» | 7,596,364.0 | 759,636.0 | 8,356,000.00 | 1,671,200.00 | 10,027,200.00 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» |
| | | | | | | 2 | «Տեքստուրըր» ՍՊԸ | 8,024,000.0 | 1,416,000.0 | 9,440,000.00 | 1,888,000.00 | 11,328,000.00 | |
| 8 | պոլո շապիկներ/Շապիկ կարճաթև /գրասենյակային/ | հատ | 4,050 | 3,000.0 | 12,150,000.0 | 1 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ» | 6,148,636.0 | 614,864.0 | 6,763,500.00 | 1,352,700.00 | 8,116,200.00 | Բանակցություն 1 մասնակից |
| 9 | ամենօրյա կոշկեղեն/Կոշիկ՝ խրոմե | զույգ | 7,000 | 6,240.0 | 43,680,000.0 | - | - | - | - | - | - | - | գնային առաջարկի բացակայություն |
| 10 | ամենօրյա կոշկեղեն/Կոշիկ՝ կարճաճիտ, խրոմե | զույգ | 3,000 | 6,420.0 | 19,260,000.0 | - | - | - | - | - | - | - | գնային առաջարկի բացակայություն |
| 11 | միջադիրներ/ Ներդիր կոշիկի,տաք | զույգ | 50,000 | 392.0 | 19,600,000.0 | 1 | «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ ՍՊԸ» | 17,182,500.0 | 2,567,500.0 | 19,750,000.00 | | 19,750,000.00 | Բանակցություն բարձր գին |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով գնման ընթացակարգի **1, 2, 8 և 11-րդ** չափաբաժինների մասով հրավերի պայմաններին համապատասխան ոչ գնային պայմանները բավարարող գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները միակն են, ինչպես նաև **11-րդ** չափաբաժնի մասով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտ ներկայացրած մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է տվյալ գնման առարկայի գնման հայտով սահմանված գինը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի հավելված 1-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշեց նիստը կասեցնել և մասնակիցներին տեղեկացնել, որ գների նվազեցման նպատակով **08.05.2020թ. ժամը 15:20-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվել են բանակցություններ:

Բանակցություններին չի ներկայացել ծանուցված մասնակիցների կողմից ոչ մի ներկայացուցիչ, ուստի մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները մնացին անփոփոխ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

4.1 **13.05.2020թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝

1. «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով,
2. «ԳԴԱԿ» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով,
3. «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին 3, 4, 5, 6, 7, 8-րդ չափաբաժինների մասով

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով **9 և 10-րդ չափաբաժինների** մասով և նույն հոդվածի 3-րդ կետի հիմքով **11-րդ չափաբաժնի** մասով սույն ընթացակարգը **հայտարարել չկայացած**:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

(Ա. Հովհաննիսյան)

5.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/32» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Ա. Թոփչյան |
| Գնահատող | Գ. Ուստյան |
| Գնահատող | Վ. Բարսեղյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Հովհաննիսյան |